

ՍԱՅԵԱԹՆՈՎԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Սարիամ Թորաբի

(Սպահանի պետական համալսարանի հայագիտության բաժին)

Նախաբան

Սայեաթնովագիտութիւնն ունի 160 տարուայ պատմութիւն: 19-20-րդ դարերում Հայ բանասիրական միտքը գիտական տարբեր տեսանկիւններից անդրադարձել է Սայեաթ-Նովայի քնարերգութեան ակունքների բացայայտմանը: Նշանակալից են մասնաւորաբար Սայեաթ-Նովայի բնագրերը ի մի բերած հրատարակիչները, որոնք տաղերի ժողովածուները կազմելիս հանդէս են եկել 18-րդ դարի բանաստեղծական արուեստի ընդհանուր գնահատմամբ և Սայեաթ-Նովայի տեղի ու դերի պարզաբանմամբ՝ այսպիսով հիմք դնելով սայեաթնովագիտութեանը:

Սայեաթնովագիտութեան հիմնադիրը Գ. Ախուրդեանն է, որի գործի կարևորութեան մասին Գ. Մադոյեանը գրում է. «Սայեաթ-Նովայի ստեղծագործութեան պատրաստողը հրատարակութիւնը իր ժամանակի համար մշակութային խոշոր երևոյթ էր, որին ակնդէտ հետևում էր ամբողջ գիտական աշխարհը»¹:

Սայեաթնովագիտութեան սիւներ են համարւում Գ. Ասատուրը, Գ. Լէոնիձէն, Լ. Մելիքսեթ բեկը, Ն. Աղբալեանը, Գ. Լևոնեանը, Մ. Հասրաթեանը և այլք, որոնց ուսումնասիրութիւնները ճանապարհ են հարթել հետագայ սայեաթնովագէտների համար:

Սայեաթնովագիտութեան անցած ճանապարհը մենք բաժանել ենք մի քանի

հիմնական ուղղութիւնների՝ ա) տաղերի ժողովածուների կազմում՝ վերլուծական առաջաբաններով, կենսագրական տուեալներով և արժեքաւոր ծանօթագրութիւններով, բ) գրականագիտական մեմագրութիւններ, գ) տարբեր համդէսներում ու ժողովածուներում տեղ գտած բանասիրական, մասնաւորաբար գրականագիտական յօդուածներ, գնահատանքի դրսևորումներ, դ) երաժշտագիտական մեկնութիւններ, ե) գեղարուեստական ստեղծագործութիւններ, զ) համաժողովրդական տօներ, յրբեւեանական գիտական նստաշրջաններ և արուեստի տարբեր ճիւղերում դրսևորումներ:

ա) Տաղերի ժողովածուների կազմում՝ վերլուծական առաջաբաններով, կենսագրական տուեալներով և արժեքաւոր ծանօթագրութիւններով: Այս առումով նախ յիշատակութեան արժանի է զինուորական բժիշկ, հայեագէտ և աշուղագէտ Գևորգ Ախվերդեանի գրական առաջնելը՝ «Սայեաթ-Նովա՝ հայերէն խաղեր» ժողովածուն², որը աշուղի ձեռագիր դաւթարի հայերէն խաղերի հրատարակման առաջնեկն է: «Վերծանելով, ուսումնասիրելով տաղանդաւոր աշուղի ձեռագիր դաւթարում եղած շուրջ 40 հայերէն տաղերը՝ Ախվերդեանը որոշ ճշգրտումներ է արել դրանց ստեղծման մօտաւոր ժամանակի և հանգամանքների վերաբերեալ՝ այդ տեղեկութիւնները ներկայացնելով ծանօթագրութիւններում»³, գրում է Տ. Սարգսեանը: Ինչպէս յայտնի է, Գ. Ախվերդեանը արժէքաւոր տեղեկութիւններ է յայտնում տաղերի ստեղծման

1 Գ. Մադոյեան, Գևորգ Ախվերդեանը սայեաթնովագիտութեան հիմնադիր, - ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», Երևան, 1963, թիւ 10, էջ 67:

2 Գ. Ախվերդեան, Սայեաթ-Նովա. Հայերէն խաղեր, Մոսկվա 1852:

3 Տ. Սարգսեան, Սայեաթ-Նովային ու սայեաթնովագիտութեանն առնչուող մի քանի հարց, - «Պատմա-բանասիրական հանդէս», ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրատ., 2015, թիւ 1, էջ 183:

ժամանակի, նաև տաղերգուի կենսագրութեան մասին: Գ. Ախվերդեանի կազմած այս ժողովածուն և առաջաբանը ուղեցոյց են հանդիսացել հետագայ ուսումնասիրողների համար: «Մեծ, անչափ մեծ է Սայեաթ-Նովայի երգերի առաջին գիտական հրատարակութեանը կցուած առաջաբանի գրականագիտական նշանակութիւնը, դա հայ նոր գրականութեան զարգացման ճանապարհը լուսաւորող առաջին ջանքն էր, որն իր դրական դերը կատարեց հայ գրականագիտական մտքի պատմութեան մէջ», գրում է Գ. Մադոյեանը⁴: Նշենք նաև, որ այս ժողովածուն գիտական վստահելի սկզբնաղբիւր է նաև Թիֆլիսի բարբառի նախնական վիճակի մասին:

Այս շարքում անուրանալի են Գարեգին Լևոնեանի ջանքերը: Նրա կազմած լիակատար ժողովածուն ևս նոր լոյս է սփռում սայեաթնովագիտութեան բնագաւառում⁵:

Այս խմբում յաջորդը Մօրուս Հասրաթեանի ներդրումն է, որը վրացերէն և ադրբեջաներէն գրուածքներով ամբողջական է դարձնում Սայեաթ-Նովայի տաղարանը⁶:

Ժամանակակից սայեաթնովագիտութեան մէջ իր ուրոյն տեղն ունի գրականագէտ, բ.գ.դ. Հ. Բախչինեանը՝ իր կազմած լիակատար ժողովածուի ընդարձակ առաջաբանում ծանօթագրելով ու նորովի ներկայացնելով աշուղին⁷: Նա գրում է. «1852 թ. Մոսկուայում, Մ. Էմինի անմիջական օժանդակութեամբ, լոյս է տեսնում Սայեաթ-Նովայի հայերէն խաղերի առաջին ժողովածուն, որով և հիմք է դրւում բանաստեղծի երգերի հրատարակութիւններին և առհասարակ՝ սայեաթնովագիտութեանը»⁸: Հ. Բախչինեանը նաև առանձին աշխատութիւն է նուիրում տաղերգուի կեանքին ու գեղարուեստական գործունէութեանը⁹:

Տարբեր տարիներին տարբեր աշխատասիրողների կողմից Մոսկուայում, Երևանում, Թիֆլիսում, Բէյրութում, Թեհրանում, Փարիզում և այլուր հրատարակւում և վերահրատարակւում են Սայեաթ-Նովայի շուրջ չորս տասնեակ ժողովածուները՝ «Տաղեր», «Երգեր», «Հայերէն խաղեր» «Խաղեր», «Բանաստեղծութիւններ», «Երգարան», «Դաւթար», «Քնարերգութիւն», «Ընտրանի» և այլ վերնագրերով¹⁰ դարձնե-

4 Գ. Մադոյեան, Գևորգ Ախվերդյանը սայաթնովագիտութեան հիմնադիր, էջ 67:

5 Սայեաթ-Նովա, Հայերէն խաղերի լիակատար ժողովածոյ, աշխատասիրութեամբ Գ. Լևոնեանի, Երևան, 1931:

6 Սայեաթ-Նովա, Հայերէն, վրացերէն և ադրբեջաներէն խաղերի ժողովածու, Երևան, 1959 (կազմեց՝ Մ. Հասրաթեանը):

7 Սայեաթ-Նովայի բանաստեղծական ժառանգութիւնը: Բնագրեր և քննութիւն / Հ.Գ. Բախչինեան: Երևան, 1948:

8 Սայեաթ-Նովա, խաղերի ժողովածու, աշխատասիրութեամբ Հ. Բախչինեանի, Երևան, 1987, էջ 5:

9 Տե՛ս Հ. Բախչինեան, Սայեաթ-Նովա. Կեանքը և գործը, Երևան, 1988:

10 Տե՛ս Տաղեր, Թիֆլիս, 1914, 120 էջ: Երգեր, Պէյրութ, 1931, 85 էջ: Հայերէն խաղերի լիակատար ժողովածու, Երևան, 1931, 196 էջ: Տաղեր, Պէյրութ, 1931, 88 էջ: Հայերէն խաղերի լիակատար ժողովածու, Երևան, 1935, 120 էջ: Տաղեր, Թեհրան, 1943, 196 էջ: խաղերի ժողովածու, Երևան,

1945, 220 էջ: Երգեր, Երևան, 1946, 60 էջ: Սիրոյ եւ արդարութեան երգիչ Սայեաթ-Նովա, Պէյրութ, 1952, 84 էջ: Հայերէն, վրացերէն, ադրբեջաներէն խաղերի ժողովածու, Երևան, 1959, 316 էջ: Բանաստեղծութիւններ, Երևան, 1963, 88 էջ: խաղեր, Երևան, 1963, 144 էջ: Հայերէն, վրացերէն, ադրբեջաներէն խաղերի ժողովածու, Երևան, 1963, 348 էջ: Երգարան, Պէյրութ, 1966, 176 էջ: խաղեր, Երևան, 1969, 144 էջ: Սիրոյ եւ արդարութեան երգիչ Սայեաթ-Նովա, Պէյրութ, 1969, 108 էջ: Պ. Սևակ, Սայեաթ-Նովա, Երևան 1969: Սայեաթ-Նովայ 250 (տաղարան), Պէյրութ, 1970, 96 էջ: Հայերէն խաղեր, Երևան, 1984, 244 էջ: խաղեր, Երևան, 1987, 284 էջ: խաղեր, Երևան, 1987, 588 էջ: Հ. Բախչինեան, Սայեաթ-Նովա, Կեանքը և գործը, Երևան, 1988: Հայերէն խաղեր, Պէյրութ, 1992, 144 էջ: խաղեր (լիակատար ժողովածու), Երևան, 2003, 440 էջ: Հայերէն խաղեր, Երևան, 2004, 140 էջ: Դաւթար (մմանահանութիւն), Երևան, 2005, 140 էջ: Հայերէն, վրացերէն և ադրբեջաներէն խաղերի ժողովածու, Թիֆլիսի, 2005, 192 էջ: Սայեաթ-Նովա, Հայերէն տաղերը, (47

լով նրան, ինչպես Վալերի Բրիլսոնն է բնորոշում, «Համայն մարդկութեան սիրելին»¹¹:

20-րդ դարի սկզբին Սայեաթ-Նովայի ստեղծագործությունները հրատարակում են նաև թարգմանաբար: Սայեաթ-Նովայի Համամարդկային արուեստի միջազգայնացմանն ու լայն տարածմանը նպաստում են նրա թարգմանիչները: Իրանահայ Վարդգէս Զարգարեանը ժամանակակից արևելահայերէնի է փոխադրում Սայեաթ-Նովայի 68 խաղերը, որոնց կից ներկայացնում է թուրքերէն, պարսկերէն, արաբերէն բառերի թարգմանությունները, իսկ գրքի վերջում տալիս է այդ բառերի բացատրությունները և հոմանշային շարքերը:

Սայեաթ-Նովայի լայնօրէն ճանաչմանը մեծապէս նպաստում են ռուս բանաստեղծներ Վ. Բրիլսոնը, Մ. Լոգինսկին, Ս. Շերուխինսկին, Կ. Լիպսկերովը, Ա. Տարկովսկին և այլք, որոնց կատարած թարգմանությունների միջոցով Սայեաթ-Նովան մատչելի է դառնում ռուսալեզու ընթերցողների համար: Սայեաթ-Նովայի տաղերի հմուտ թարգմանիչներից էր Վ. Զուբազինցևան, որը «Քնարերգություն» վերնագրով թարգմանական առանձին ժողովածու է հրապարակում¹²:

բ) Գրականագիտական մեմագրություններ: Սայեաթնովագիտության երկրորդ կարևոր ճիւղը կազմում են գրականագիտական մեմագրությունները, որոնցում գրականութեան տեսաբանները հանգամանօրէն ներկայացնում են Սայեաթ-Նովայի բանաստեղծական արուեստի ուժն ու հմայքը, տաղաչափական առանձնայատկությունները՝ յատկանշելով համաշխարհային գնահատանքի արժանի իւրայատուկ այդ քնարերգութեան կայուն տեղը հայ գրականութեան պատմութեան մէջ: Այդ գործերից կարելի է յիշատակել Գևորգ Աբովի «Սիրոյ և արդարութեան մեծ երգիչը՝ Սայեաթ-Նովան», Ն. Աղբալեանի «Սայեաթ-Նովայի հետ», Հ. Մուրադեանի, Խ. Սարգսեանի, Պ. Սևակի, Յ. Թումանեանի համանուն «Սայեաթ-Նովա», Մ. Հասրաթեանի «Երգի հանճարը» և այլ մեմագրություններ¹³:

Այս շարքի մեմագրություններից իրենց արծարծած թեմատիկայով և դիտարկմամբ առանձնանում են Ա. Ղանալանեանի և Պ. Մուրադեանի գործերը: Առաջինում բանագէտ-բանահալաքը քննում է Սայեաթ-Նովայի ստեղծագործութեան ժողովրդական ակունքները, ցոյց տալիս այն ամուր հոգևոր կապը, որը գոյություն ունի

տաղերի թարգմանություն), Եղիսաբէթ Մուրադեանի հետ և Սերժ Վեմստորինի, երկուսն էլ հրատարակում, Éditions L'Harmattan, 2000-2006, Paris, 2006 (նուիրում է Սերգէյ Փարաջանովին): Հայերէն և թուրքերէն խաղեր, Երևան, 2006, 224 էջ: Բանաստեղծություններ, Երևան, 2007, 260 էջ: Խաղեր, Երևան, 2007, 260 էջ: Հայերէն խաղեր, Երևան, 2007, 274 էջ: Խաղեր (ընտրանի), Երևան, 2010, 68 էջ: Վրացերէն և թուրքերէն խաղեր (ընտրանի), Երևան, 2010, 98 էջ: Խաղեր, Թբիլիսի, 2011, 98 էջ: Խաղեր (երգարան), Երևան, 2012, 80 էջ: Հայերէն և թուրքերէն խաղեր, Երևան, 2012, 200 էջ: Հայերէն խաղեր, Երևան, 2013, 268 էջ: Բնարեղբայրություն, Երևան, 2015, 128 էջ: Ընտրանի, Երևան, 2016, 208 էջ: Չարլզ Դաուսեթ, «Սայեաթ Նովա», Հայերէն խաղեր. Բառաբանական մեկնաբանություններով / Սայեաթ-Նովա; Աշխատասիրություններ՝ Վ.Հ. Զարգարեանի և այլն, և այլն:

11 В. Брюсов, Поэзия Армении с древнейших времен до наших дней, под редакцией, со вступительным очерком и примечаниями В. Брюсова, Москва, 1916, ст. 59-60.

12 Տե՛ս Տայտ Нова, Лирика, Москва, 1963.

13 Տե՛ս Գ. Աբով, Սիրոյ և արդարութեան մեծ երգիչը՝ Սայեաթ-Նովան, Երևան, 1945, 85 էջ: Հ. Մուրադեան, Սայեաթ-Նովա, Երևան, 1963, 85 էջ: Խ. Սարգսեան, Սայեաթ-Նովա, Երևան, 1963, 127 էջ: Պ. Սևակ, Սայեաթ-Նովա, Երևան, 1969: Մ. Հասրաթեան, Երգի հանճարը, Երևան, 1963: Յ. Թումանեան, Սայեաթ-Նովա, Երևան, 1957: Յ. Թումանեան, Սայեաթ-Նովա (յօրուածներ և ճառեր), Երևան, 1963: Ն. Աղբալեան, Ամբողջական երկեր, հտ. 2, Սայեաթ-Նովայի հետ, Պէյրութ, 1966 և այլն, և այլն:

Համաժողովրդական աշուղի և ժողովրդական բանաւոր խօսքի միջև¹⁴: Երկրորդ աշխատանքում նշանաւոր վրացագէտ-պատմաբանը վկայաբերում է վրացական այն աղբիւրները, որոնցում յիշատակումներ կան Սայեաթ-Նովայի մասին, և ընդգծում է այդ եզակի նիւթերի կարեւորութիւնն ու ճանաչողական մեծ արժէքը¹⁵:

գ) Տարբեր Հանդէսներում ու ժողովածուներում տեղ գտած բանասիրական, մասնաւորաբար գրականագիտական յօդուածներ, գնահատանքի դրսևորումներ: Այս բաժինն ամենածաւալունն է, որովհետև տարիների ընթացքում սայեաթնովագիտութեամբ և միջնադարեան Հայ գրականութեամբ ու լեզուի հարցերով զբաղողները տարբեր գրական Հանդէսներում տպագրել և տպագրում են բազմաթիւ յօդուածներ, գրախօսութիւններ, որոնք հնարաւոր է մեկ առ մեկ թուարկել ու յիշատակել: Բայց և պիտի ասել, որ դրանցից իւրաքանչիւրը մի արժէքաւոր և կայուն քար է սայեաթնովագիտութեան ամրոցի պատին:

Այս խմբի աշխատանքները բաժանել ենք երկու հիմնական ենթախմբի՝ 1) գրականագիտական, 2) լեզուաբանական:

1) Գրականագիտական ուսումնասիրութիւններ: Այս առումով մեզ Համար ուղղորդիչ կարող է հանդիսանալ Տ. Սարգսեանի «Սայեաթ-Նովայի ու սայեաթնովագիտութեանն առնչուող մի քանի հարց»¹⁶ յօդուածը՝ տպագրուած ՀՀ ԳԱԱ-ի «Պատմա-բանասիրական հանդէսում»: Յօդուածի հեղինակը պարզաբանում է սայեաթնովագիտութեանն առնչուող հարցերը և ի մի է բերում սայեաթնովագէտների հրատարակած նշանակալից գործերը: Յօդուածագիրը նախ

անդրադառնում է ամենայն հայոց բանաստեղծ Յ. Թումանեանի՝ Սայեաթ-Նովայի արուեստի ծանրակշիռ գնահատանքին:

Յ. Թումանեանը տարբեր առիթներով Սայեաթ-Նովային անդրադարձել է մի քանի յօդուածներով, որոնք զետեղուած են «Քննադատութիւն, հրապարակախօսութիւն, նամակներ» վերնագրով ժողովածուում¹⁷: Ծանրակշիռ ու սրտաբուխ է Թումանեանի գնահատականը. «Ո՛չ, նա մի նորօրինակ ձև էի, մոգա էի, որ ժամանակի ընթացքում ձանձրանցի ու փոխուի. նրան մին լսողը երկրորդ անգամ լսելիս աւելի պիտի սիրի, և մին հասկանալուց ու սիրելուց յետոյ երբեք չպիտի մոռանայ: Գեղեցիկ ձևի մէջ մի մշտավառ հուր հոգի է նա, մի ազնիւ ու լիքը սիրտ, մի հարազատ հօգը շունչ, որ մեր աշխարհքի հարազատ շնչի նման միշտ խաղալու է Կովկասի ժողովուրդների վրայ, ե՛լ հայի, ե՛լ վրացու, ե՛լ թուրքի վրայ, որովհետև հաւասար ուժով երգել է ե՛լ հայերէն, ե՛լ վրացերէն, ե՛լ թուրքերէն»:

Յ. Թումանեանի հրապարակումներից յիշատակելի են «Սայեաթ Նովայի շիրիմը» (1912 թ.), «Երկու մեծ թիֆլիսեցիներ» (1913 թ.), «Սաեաթ Նովայի երգերի բնաւորութիւնը» (1913 թ.), «Քուչակ Նահապետի և Սայեաթ Նովայի ողուսերէն թարգմանութիւնների առիթով», «Անգիտակից թշնամիներ» (1913 թ.), «Մի պայծառ շիրիմ» յօդուածները, որոնցում արտայայտուած մի շարք մտքեր դարձել են բանձեային բնորոշումներ և համընդհանուր սիրոյ արտայայտութեան վկայութիւններ:

Սայեաթ-Նովայի կենսագրական մանրամասները, կերպարն ու ստեղծագործութեան գեղարուեստական արժանիքները, յանգաւորման, տաղաչափական դասական

14 Տե՛ս Ա. Ղանալանեան, Սայեաթ-Նովայի ստեղծագործութեան ժողովրդական ակունքները, Երևան, 1963:

15 Տե՛ս Պ. Մուրադեան, Սայեաթ-Նովան ըստ վրացական աղբիւրների, Բանասիրական պրպտումներ և նիւթեր, Երևան, 1963:

16 Տե՛ս Տ. Սարգսեան, Սայեաթ-Նովային ու սայեաթնովագիտութեանն առնչուող մի քանի հարց, էջ 183-191:

17 Տե՛ս Յ. Թումանեան, Երկեր, Քննադատութիւն, հրապարակախօսութիւն, նամակներ, Եւրո-հրատ, Երևան, 2018:

առանձնայատկութիւնները, ժամանակաշրջանի բարոյաչոգեբանական բարքերը, վրաց գրականութեան մէջ ունեցած ազդեցիկ դերը տարբեր յօդուածներով ամբողջական են դարձնում նաև Գ. Թարվերդեանը, Գ. Լևոնեանը, Ն. Աղբալեանը, Մ. Հասրաթեանը, Կ. Գուրգարեանը, Ն. Թաճմիսեանը, Հ. Անասեանը, Գ. Մադոյեանը, Մ. Նաբեանը, Գ. Անանեանը, Բ. Չուքասգեանը, Ա. Ղանալանեանը, Հ. Բայրամեանը, Տ. Սարգսեանը, Ա. Դոլուխանեանը, Կ. Խանեանը և շատ շատերը¹⁸:

Ռուս գրող Եակով Պոլոնսկին, 1846-1881 թթ. ապրելով Թիֆլիսում, ուսումնասիրելով հայ ժողովրդի պատմութիւնն ու գրականութիւնը, լսելով ժողովրդի սիրած աշուղի մասին, Ախվերդեանի միջոցով ծանօթանում է Սայեաթ-Նովայի ստեղծագործութեանը և «Կաւկազ» թերթի 1851 թուականի առաջին և երկրորդ համարներում հանդէս է գալիս Սայեաթ-Նովայի մասին ընդարձակ յօդուածով¹⁹: Նոյն շրջանում ֆրանսիացի հայագէտ Դիլորիէն Փարիզի «Երկու աշխարհ» թերթում տպագրած իր յօդուածում, բարձր գնահատականի արժանացնելով Ախվերդեանի մեծարժէք գիտական գործունէութիւնը, գրում է. «Մեզ

18 Տե՛ս Գ. Թարվերդեան, *Սայեաթ-Նովայի անտիպ երգերից*, - «Տեղեկագիր ԽՍՀՄ պատմութեան և գրականութեան ինստիտուտի», գիրք Ա, Երևան, 1938, էջ 246-250: Գ. Լևոնեան, *Աշուղները և նրանց արուեստը*, Երևան, 1944, էջ 34-45: Ն. Աղբալեան, *Ընտրանի*, Կազմեց և ծանօթագրեց Գ. Անանեանը, Երևան, 2005, էջ 31: Մ. Հասրաթեան, *Սայեաթ-Նովայի Դարթարը*, - ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր հասարակական գիտութիւնների», 1963, N 10, էջ 3-32, 1963, № 11, էջ. 3-22: Կ. Դուրգարեան, *Սայեաթ-Նովայի հանգարանը*, - ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր հասարակական գիտութիւնների», 1963, № 10, էջ 69-76: Ն. Թաճմիսեան, *Սայեաթ-Նովայի հայերէն երգերի եղանակների մասին*, - «Տեղեկագիր ՀՍՍՀ ԳԱ», 1963, N 10: Գ. Մադոյեան, Գ. Ախվերդեանը սայեաթնովագիտութեան հիմնադիր, - ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր հասարակական գիտութիւնների», Երևան, 1963, № 10, էջ 59-68: Մ. Նաբեան, *Սայեաթ-Նովա և Յովհ. Թումանեան*, - ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր հասարակական գիտութիւնների», 1963, № 10, pp. 103-114: Գ. Անանեան, *Սայեաթ-Նովայի կերպարը պոէզիայում*, - ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր հասարակական գիտութիւնների», 1963, № 10, էջ 115-122: Ն. Թաճմիզեան, *Սայեաթ-Նովայի հայերէն երգերի եղանակների մասին*, - ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր հասարակական գիտութիւնների», 1963, № 10, էջ 33-58: Յ. Անասեան, *Սայեաթ-Նովայի աղբրեջաներէն մի նորայայտ տաղը*, - «Պատմա-բանասիրական հանդէս», 1963, № 4, էջ 223-224: Բ. Չուքասգեան, *Սայեաթ-Նովայի ընթրիմակած նորայայտ ձեռագիր մատենանը*, - «ԼՀԳ», 1981, N 7: Մ. Հասրաթեան, *Սայեաթ-Նովայի Դարթարը*, «Տեղեկագիր ՀՍՍՀ ԳԱ», 1963, N 10-11: Ա. Ղանալանեան, *Սայեաթ-Նովայի արուեստի ժողովրդական հմեղները*,

«Պատմա-բանասիրական հանդէս», 1947, № 2, էջ 87-102: Ա. Ղանալանեան, *Սայեաթ-Նովան հայկական աւանդութիւններում*, - «Պատմա-բանասիրական հանդէս», ՀՍՍՌ ԳԱ, 1963, № 3, էջ 79-90: Ա. Ղանալանեան, *Սայեաթ-Նովայի մահուման հարցի շուրջ*, - «Գրական թերթ», 1963, 31 մայիսի: Ա. Ղանալանեան, *Սայեաթ-Նովայի սիրոյ լեզունը*, - «Գրական թերթ», 1963, 6. սեպտեմբերի: Ա. Ղանալանեան, *Ժողովրդական բանարուեստի արտացոլումը Սայեաթ-Նովայի երգերում*, - «Պատմա-բանասիրական հանդէս», 1982, № 1, էջ 17-27: Պ. Մուրադեան, *Սայեաթ-Նովայի ստեղծագործութեան դերը վրաց գրականութեան մէջ*, Երևան 1963, էջ 90-96: Գ. Նալբանդեան, «Սայեաթ-Նովայի ծածկագիր տաղերի վերծանման շուրջ», - «Բանբեր Երևանի համալսարանի», 1976, թիւ 2: Ռ. Իշխանեան, *Արևելահայ բանաստեղծութեան լեզուի պատմութիւն*, Երևան, 1978, էջ 75: Հ. Բայրամեան, *Սայեաթ-Նովայի հայերէն խաղերի վրացերէն թարգմանութեան պատմութիւնից*: Տ. Սարգսեան, *Սայեաթ-Նովային ու սայեաթնովագիտութեանն առնչուող մի քանի հարց*, - «Պատմա-բանասիրական հանդէս», էջ 183-19: К. Ханян, *Саят-Нова и русские поэты (к 180-летию со дня рождения)*. Արցախի պետական համալսարան, Գիտական տեղեկագիր, 1 (5), 2002, Ստեփանակերտ, էջ 108-113: Շ. Գրիգորեան, *Սայեաթ-Նովան արևելեան պոէզիայի համակարգում*, - «Հայ աշուղագիտութիւնը և արդի հիմնախնդիրները», Գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Երևան, 2005 և այլն, և այլն:

19 Տե՛ս X. C. Саркисян, *Саят-Нова*, - «Պատմա-բանասիրական հանդէս», 1963, թիւ 3, էջ 105:

մնում է ցանկանալ, որ այդ ժողովածոյի հրապարակումը մեզ շուտով առիթ կտայ ճանաչելու և գնահատելու նոր Հայաստանի ժողովրդական մուսայի ստեղծագործութիւնները»²⁰:

2) Լեզուաբանական ուսումնասիրութիւններ: Սայեաթ-Նովան եռալեզու բանաստեղծ է: Հմտօրէն տիրապետելով վրացերէնին և աղբրեջաներէնին՝ ստեղծագործել է նաև այդ լեզուներով: Մեծ սիրահարի հայերէն տաղերը Թիֆլիսի բարբառով են: Ուստի լեզուաբանները քննութեան նիւթ են դարձրել Թիֆլիսի բարբառի առանձնայատկութիւնները և բարբառային բառապաշարի տեղին ու հմուտ գործածութիւնը: Ա. Քոչոյեանը կազմել է Սայեաթ-Նովայի հայերէն խաղերի բառարան, որը, ըստ էութեան, նաև Թիֆլիսի բարբառի բացատրական բառարան է²¹:

Մի շարք բանասէրներ՝ Գ. Լևոնեանը, Ռ. Աբրահամեանը, Ա. Ղարիբեանը, Վ. Համբարձումեանը, Ն. Յովհաննիսեանը, Զ. Բառնասեանը և այլք, տարբեր մօտեցումներով անդրադարձել են տաղերի լեզուի քննութեանը²²: Նրանց յօդուածների շնորհիւ սայեաթնովագիտութիւնը համալրուել

է նաև լեզուաբանական արժէքաւոր դիտարկումներով:

դ) Երաժշտագիտական մեկնութիւններ: Սայեաթ-Նովան հետաքրքիր է ոչ միայն իր բանաստեղծական ատաղձով, այլև բարձրարուեստ խօսքին համապատասխան ձայնային ելևէջներով, մեղեդայնութեամբ ու երաժշտականութեամբ: Անուանի երաժշտագէտներ են անդրադարձել խօսքի ելևէջային արտայայտութեանն ու յուզականութեանը: Ք. Քուշնարեանն ընդգծում է Սայեաթ-Նովայի երաժշտական լեզուի սերտ կապը Հայ ժողովրդական, քաղաքային, գոսանական, ընդհուպ գեղջկական երգի հետ²³: Ուշագրաւ են երաժշտագէտ Լ. Երնջակեանի՝ Սայեաթ-Նովային նուիրուած գիտական վերլուծութիւնները: Նա, քաջածանօթ լինելով Թիֆլիսի, Մերձաւոր Արևելքի աշուղական սիրավէպի երաժշտական առանձնայատկութիւններին²⁴, Հայ-իրանական երաժշտական կապերի պատմութեանը²⁵, ներկայացնում է Սայեաթ-Նովայի խաղերի երաժշտագիտական հիմքերը²⁶:

ե) Գեղարուեստական ստեղծագործութիւններ: Սայեաթ-Նովայի բանաստեղծական ոգին ազդել է հետագայ գրողների ու

20 Տե՛ս Ա. Դոլուխանեան, Հայ գրականութեան պատմութիւն, Երևան, 2006, էջ 119:

21 Տե՛ս Ա. Քոչոյեան, Սայեաթ-Նովայի հայերէն խաղերի բառարան, Երևան, 1963:

22 Տե՛ս Սայեաթ-Նովա-300, ՀՀ ԳԱԱ արուեստի ինստիտուտ, Յոբելեանական գիտական նստաշրջան՝ նուիրում Սայեաթ-Նովայի ծննդեան 300-ամեակին (21 յունիսի, 2012), Զեկուցումների ժողովածու, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրատարակչութիւն, 2012: Վ. Համբարձումեան, Նկատարումներ Սայեաթ-Նովայի հայերէն խաղերի մի քանի բառի վերաբերեալ, - «Սայեաթ-Նովա-300», էջ 36-42: Ն. Յովհաննիսեան, Դիտարկումներ Սայեաթ-Նովայի հայերէն խաղերի հնչիւնական համակարգի մասին, էջ 171-183: Ա. Ղարիբեան, Թիֆլիսի բարբառը Սայեաթ-Նովայի երգերում (Սայեաթ-Նովա, Գիտական աշխատութիւնների ժողովածու), Երևան, 1963, էջ 75: Ն. Յովհաննիսեան, Սայեաթ-Նովայի հայերէն խաղերի հնչիւնական համակարգի առանձնայատկութիւնները, - «Լրաբեր հասարակական

գիտութիւնների», թիւ. 9 (48), Երևան, 1990, էջ 48-56: Զ. Բառնասեան, Թիֆլիսի բարբառին առնչուող մի քանի իրողութիւնների շուրջ, - Հանրապետական գիտաժողովի նիստերի ժողովածու նուիրում Վ. Ա. Քոչոյեանի ծննդեան 90-ամեակին, Երևան, 2017, էջ 70-75:

23 Տե՛ս X. Кушнарев, Вопросы истории и теории армянской монодической музыки, Ленинград, 1958, с. 255-258.

24 Լ. Երնջակեան, Աշուղական սիրավէպը մերձաւոր արևելեան երաժշտական փոխառնչութիւնների համատեքստում, Երևան, 2009, էջ 85-96:

25 Լ. Երնջակեան, Հայ-իրանական երաժշտական կապերի պատմութիւնից, Երևան, 1991, էջ 82-86:

26 Սայեաթ-Նովայի խաղերի երաժշտագիտական հիմքերը, Սայեաթ-Նովա-300, ՀՀ ԳԱԱ արուեստի ինստիտուտ, Յոբելեանական գիտական նստաշրջան՝ նուիրում Սայեաթ-Նովայի ծննդեան 300-ամեակին (21 յունիսի, 2012), Զեկուցումների ժողովածու, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրատարակչութիւն, 2012, էջ 7-22:

բանաստեղծների վրայ՝ առիթ դառնալով նորանոր ստեղծագործությունների ծնունդի: Բազմաթիվ են Հայ և օտարազգի ստեղծագործողների՝ Սայեաթ-Նովային դիպուկ բնորոշող ասոյթները: Սայեաթ-Նովայի տաղերի համաբանութեամբ է գրուած Եղիշէ Ջարենցի «Տաղարանը»: Սայեաթ-Նովայի կերպարը և կենսագրութիւնը դարձել են գեղարուեստական պատումների հիմք: Այս շարքում առանձնանում է Ջ. Դարեանը, որն իր մեծ սէրն ու գնահատանքը արտայայտել է «Սայեաթ-Նովա» երկհատոր վէպով²⁷: Վէպի երկրորդ հատորի վերջում կայ «Ծանօթագրութիւններ» բաժին, որում հեղինակը համառօտ տեղեկութիւններ է հաղորդում պատմական դէպքերի և դէմքերի մասին, ինչպէս նաև բացատրում մի շարք անհասկանալի բառերի իմաստները: Չնայած պատմական վէպ, գեղարուեստական շարադրանք լինելու հանգամանքին՝ այս երկը ևս Սայեաթ-Նովայի մասին գիտելիքը հարստացնելու կարևոր աղբիւր է: Այս ժանրին են յարում նաև Մ. Հասրաթեանի «Սայեաթ-Նովա» կենսագրական ակնարկը²⁸, Հ. Մուրադեանի «Սայեաթ-Նովա» կինովիպակը²⁹:

զ) Համաժողովրդական տօներ, յոբելեանական գիտական նստաշրջաններ և արուեստի տարբեր ճիւղերի դրսևորումներ: Սայեաթ-Նովայի մասին գիտելիքը հանրայնացնում, նրա համազգային երևոյթ են դարձնում ու կենսամատենագիտութիւնը համալրում յատկապէս աշուղին նուիրուած համաժողովրդական տօները, յոբելեանական նստաշրջանները, նրա անունը կրող գիտակրթական, երաժշտական հաստատութիւնները, համերգասրահները, փողոց-

ներն ու բնակավայրերը, նրա կերպարը անմահացնող քանդակներն ու արձանները, կինոնկարները³⁰, տեսաերիզներն ու տեսահոլովակները, ինչպէս և արուեստի տարբեր ճիւղերի այլ դրսևորումներ: Թուարկուածները սայեաթնովագիտութեան մաս են կազմում և սփռուած են աշխարհի տարբեր մասերում:

Ամեն տարի մայիսի վերջին կիրակի օրը Թբիլիսիում՝ Սուրբ Գևորգ եկեղեցու բակում, տեղի է ունենում Արևելքի Պետարկային³¹ նուիրուած մի շքեղ տօնակատարութիւն՝ Վարդատօնը, որը կովկասեան և արևելեան ժողովուրդների համընդհանուր սիրոյ մարմնաւորում է:

Եզրակացութիւն

Այսպիսով, բազմակողմանի և հետևողական ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, որ սայեաթնովագիտութիւնը լինելով հետազօտողների տեական քննութեան առարկայ, այնուամենայնիւ հետազօտութեան, մատենագիտական առկայ ցանկերի լրացման անհրաժեշտութիւն ունի:

Սայեաթ-Նովայի արուեստը հնարաւոր է սահմանափակել մեկ ազգի և մեկ երկրի պատկանելութեան շրջանակում: Հայ բանաստեղծը ստեղծագործել է իր ժամանակի հոգուն համահունչ, նրա բանաստեղծութիւններում լաւագոյնս դրսևորուել են տարածաշրջանում ապրող ժողովուրդների փոխյարաբերութիւնները: Սայեաթ-Նովան համամարդկային գաղափարներով տոգորուած սիրոյ մեծ երգիչ է՝ աշխարհը սիրով լցնելու և կեանքը կատարելագործելու վսեմ առաքելութեամբ:

27 Ջ. Դարեան, *Սայեաթ-Նովա*, վէպ՝ 2 հատորով, Հայպետհրատ, Երևան, 1963:

28 Մ. Հասրաթեան, *Սայեաթ-Նովա (կենսագրական ակնարկ)*, 1963:

29 Հ. Մուրադեան, *Սայեաթ-Նովա (կինովիպակ)*, Պէյրութ, 1960, 75 էջ:

30 St'u arm-cinema.am Սայեաթ-Նովա ֆիլմի մասին՝ «Նոսն գոյմը»:

31 Բնորոշումը ռուս ականաւոր գրող, հրապարակախօս ու թարգմանիչ Վալերի Բրիւսովին է:

ОСНОВНЫЕ НАПРАВЛЕНИЯ САЯТНОВОВЕДЕНИЯ

Мариам Тораби

Резюме

В настоящей статье представлены основные направления саятнововедения. «Саятнововедения» представляет собой комплекс научных (преимущественно историко-филологический) исследований о жизни и творчестве армянского поэта 18-ого века Саят-Новы (Арутюна Саядяна). Это сфера науки насчитывает около 160 лет. В 19-20 веках армянская филологическая мысль коснулась лирики Саят-Новы с разных научных позиций. Обобщая различные исследования, были выделены следующие направления саятнововедения.

а) составление сборники стихов с аналитическими предисловиями, биографическими данными и ценными примечаниями

Геворг Ахвердян считается основоположником саятнововедения считается Геворг Ахвердян. Он первым подготовил издание армянских игр ашуга на основе рукописной тетради Саят-Новы, внеся некоторые коррективы и представив их в сносках. Этот сборник также является надежным научным источником с точки зрения изучения тифлисского диалекта данного периода. Значительную роль в составлении коллекций играют и другие исследователи: Г. Лёвонян, М. Асратян, Х. Бахчинян.

б) литературоведческие монографии

В этом разделе представлены литературоведческие монографии о лирике Саят-Новы, среди которых стоит упомянуть произведения Г. Абови, Н. Азбала, Х. Мурадяна, Х. Саргсяна, П. Севака, Х. Туманяна, М. Асратяна.

в) филологические, в частности литературные статьи, благодарности, встречающиеся в различных журналах и сборниках

Этот раздел самый объемный, так как включает в себя множество небольших исследований, написанных в разные годы: статьи, обзоры и т.д. Этот раздел, в свою очередь, состоит из двух подразделов: 1. литературоведение, 2. лингвистические исследования.

г) музыковедческие интерпретации

Различные музыковеды, чьи работы упоминаются в этом разделе, обращались к выразительности и музыкальности речи ашуга.

д) художественные произведения

В этом разделе представлены различные художественные произведения, написанные о Саят-Нове. Также упоминается о киномане Х. Мурадяна "Саят-Нова".

е) всенародные праздники, юбилейные научные собрания и манифестации различных направлений искусства

В этом разделе рассматриваются следующие меры, которые носят имя Саят-Новы или посвящены великому поэту, тем самым еще больше расширяя его признание в пространстве и времени.

THE KEY AREAS OF SAYAT-NOVA'S RESEARCH

Maryam Torabi

Summary

Keywords: Armenology, Sayat-Nova research, minstrel, song, lyric poetry, literary studies, linguistics, musicology.

This article outlines and summarizes the primary trends in the study and research in the life and poetry of Sayat-Nova (Harutun Sayadjan).

dian), a renowned Armenian poet and composer of the 18th century. The term used in this paper for the totality of historical and philological research dedicated to the life and compositions of this poet is "Sayat-Nova studies", the history of which spans about 160 years.

Armenian literary critics and philologists in the last two centuries have continuously considered and discussed the poetry of Sayat-Nova from a multiplicity of perspectives. The analysis of the various approaches and studies of Sayat-Nova's poetry by these scholars has led the author to categorize them in the following categories:

a. compilation of poetry collections, accompanied by introductory notes on the poet's life and works, as well as valuable annotations and references.

The first scholar who made an attempt to approach the poetry of Sayat-Nova from a philological perspective, was Georg Akhverdian. He was the first to prepare a complete scholarly edition of Sayat-Nova's Armenian-language songs based on the author's handwritten manuscript, where he inserted some corrections and introduced them in the footnotes. His edition is a reliable source for the study of the contemporary Armenian dialect of Tiflis (Tbilisi).

Similar collections have been compiled also by G. Levonian, M. Hasratian, H. Bakhchinian.

b. literary monographs.

Under this subheading the monographs on the poetry of Sayat-Nova are extensively discussed, among which one should mention the works of G. Abov, N. Aghbalian, H. Mouradian, Kh. Sargsian, P. Sevak, H. Toumanian, M. Hasratian, and others.

c. philological and literary articles.

This is the most extensive part, as it includes numerous shorter studies on various aspects of Sayat-Nova's poetry and biography. In turn, this section is divided into two parts: a. literary studies, and b. linguistic studies.

d. musicological studies

This section enumerates and discusses the studies done on the musical aspects of the Sayat-Nova's poetry, who was better known as "ashugh" (a popular composer, musician and singer, a bard) among his contemporaries.

e. literary fiction.

Here the author discusses the fictional and cinematic works which mostly revolve around the biography of the poet.

f. popular commemorations and celebrations, conferences and artistic expressions.

In this section the author discusses the forms of expression of the public perception of Sayat-Nova's legacy. These may concern the various aspects of Sayat-Nova's legacy and pursue the goal of the popularization of the poet's works.

